

կութիւններով։ Այլապէս չափազանց խախուտ և երերուն կը լինի մի սահմանադրութիւն, որի իրագործումը կախուած կը լինի հոգեսր իշխանութեան բարի կամքից։ Քիչ ունենք կաթողիկոսական կոնդակներով հաստատուած կանոններ, որոնց գործադրել չդրժադրելը սրա նրա քմահաճոյքից էր կախուած։ Այդ է ճանապարհը որ մեզ կը հանի քաօսային շրջանակից։

I. U.

25 Յունիսի.

## ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

«Խարաբալա», երգիծաբանական թերթ.-Յեղափոխական հռուսն կեանը արտայատութիւններից մէկն էլ բազմաթիւ երգիծաբանական թերթիցի ճնունդն էր։ Ամեն բանում մենք հայես էւ, իհարկէ, ենթարկում ենք ժամանակակից հոսանքներին և արամագրութիւններին։ Պատերքուրդում լոյս տեսաւ «Սափրէ»։ Երգիծաբանական թերթի մի քանի համարները, անկայս մեր կեանքից հեռու, այդպիսի հրատարակութիւնը ունենալ չենքան էլ աշողութիւն ունենալ չեկարող թիվի մուտքում էլ սկսուեց հրատարակուել «Խաթաբալա» թերթը, որ հետեւալ կերպով է ընորոշում իր կոչումը, դիմելով՝ «Խասարակական մանր ու մեծ գործիչներին»։

«Խարաբալա»-ի էջերում գունաւոր և անգոյն պատկերներով, խօսքով, առակով, հանեցուիներով, ոտանաւորով և այլ նոյնանման այժմ խիստ արգիւած զէնքերով կռուելու ենք ձեր դէմ ամեն անգամ, երբ ձեր գործունէութեան մէջ կը նկատենք մեզ համար պատուառը, իսկ մեր

աչքում ծիծաղելի կամ պախարակելի մի գիծ։

Նկարիչները՝ Պոտտեր և Շլինդ առանձին փայլ են տալիս այդ թերթին։ Առանձին ուշագրութիւն դարձեք, օրինակի համար, № 1-ում և 3-ում հայ-թբքական ընդհարումների սկզբնապատճառ և Փինալը ներկայացնող պատկերները, որոնք գեղարվեստորէն միայն վիշտ, արտասունք են յարուցանում և ոչ ծիծաղ։ Շատ սրամիա է ծաղրած հայ ըլֆեկի էվոլուցիան ճնուած օրից մինչև թղթախախի կանաչ դաշտը (№ 3)։ Վաս չեն Դումայի և մեր հասարակական գործերի (հոգաբարձական ընտրութիւններ, բարեգործական ընկերութեան) մասին նըկարները ու խճճանքները։ Այն պախարակելի կողմերը որ խօսակցութեան առարկայ են—«Խաթաբալա» նորից շեշտում է, ընդգծում, աւելի բելիք դարձնում և ընդհանրացնում։ Այդպիսի թերթի զվարար արժեքը կայանում է անպայման շիտակութեան և անկախութեան մէջ։

նա թայֆայական չպիտի լինի և մարդկանց մասնաւոր, ինտիմ կեանքը մի կողմ թողնի. նա պիտի ձգտի անաշառոքէն և անկախօրէն ծառայել, ղեկավարուելով միայն հասարակական շահերով: Ցանկանում ենք յարատեութիւն:

**Կեանթ.**—Սոց. գեմ. հայ կազմ. այդ օրդանը շարունակում է պրոլետարական շատ որոշակի տեսակէտով քննել մեր կեանքումն նշանակութիւն ունեցող մի քանի հասարակական հարցեր, Հետաքրքրութեան արժանի են մասնաւանդքաճկանյա ինդիբը և միջազգային գիրարմատիան, և «Սոցիալ-դեմոկրատիայի կազմակերպչական սիստեմը» յօդուածները, ինչպէս և բանակուրեները «գաշնակցականներէցէմ: Ընդհանրապէս յուրջ, ինիսա տրամարանորէն գրուած յօդուածների կողքին ցաւալի է գանել այնպիսի վայրիվերոյ, նեղ աղջնդաւորական ոգով և անհամոզեցուցիչ կերպով գրած յօդուածներ, որոնք Դուման վարկարեկ անելու նպատակ ունին: Մենք միշտ եղել ենք և շարունակում ենք լինել կողմնակից մաքի, քննադատութեան ազատութեան, սակայն սակեղին հայիսյանքները, ինսինուացիաները, աշկարայ ինեղաթիւրութերը վայել չեն լուրջ հրապարակախօսութեան: Սկզբից մինչև վերջ իիստ օպղողիցիօն Դուման—որ արժանացել էնակ եւրոպական սոցիալիստների համակրութեան—ներկայակամութիւնը փնտող և «մտավախ», ուսւաց ինտելիգենցիայի լաւագոյն ներկայացուցիչներին կոչել «միամիտ երեխաներ», «շատախօս և երկարարան պառականայք», «երկշուա և մտավախ իրէօլոգներ», Դուման մկրտել «կենսապուրկի, փթած, անպէտք և անարժէք» ածականներով (№ 11)—դա չստփագանց սենսացիօն է և թունդ ըմբռութական, բայց ոչ... արդարացի...

Մենք չենք ուզենալ որ մեր բանուորութիւնը կրթուէր այդ ողով, որ ենթառում է մշտական միտինդային, յուզուած, առողջամտութիւնը կորցրած արամազրութիւն: Աոր, լուրջ գիտակցութիւն, հասարակական կարգերի փոփոխութեան գիտական ըմբռում, շշահայեաց, բանական գիրաբերումնք դէպի երեյթները—ահա ինչ է մեզ հարկաւոր, իսկ զամանական թունդ պոռոտախօսութիւնը լաւ է թողնել նրանց, որոնք այլ բան արտադրելու ընդունակ չեն. մինչդեռ, ինչպէս վերևում նկատեցինք, «Կեանթ»-ը կարող է տալ լըմիտ, ուսումնասիրական ողով գրուած յօդուածներ...

Բօտոն Արտեմիա, Vol II, №6.—Ամսաթերթի պատուակալ խմբագիրներից Mr. Edwin Mead մի առջնորդող ունի այս համարում «Հայոց հարցը և հասարակաց կարծիքը» վերնագրով:

Նա պնդում է որ Ամերիկան ժողովուրդը և կառավարութիւնը աղջու կերպով պէտքէ բոլորին հայերի կրած անպատճելի չարչարանքների մասին:

Խոկելով Ըսցո-ում բնիկ ազգաբնակութեան տառապանքների մասին, նա կոչ է անում անտարբեր չմնալ հանիչու այս տեսակի հիւազային բռնապետութեանց և անյուր հալածանաց որոնց ենթակայ է եղել մասնաւորապէս հայ ժողովուրդը Թիւրբիայում տանեակ տարիներով և անվերջ ու անվախճանապէս:

Հունգարիան 60 տարի առաջ Կօստանի-ի գրօշակին տակ կուռմէր իր աղատութեան և անկախութեան համար աւոտրիական լուծից: Ազնատեն Ամերիկան կառավարութիւնը ուղարկում է մի յատուկ ազենտ հարցը քննելու: Աստրիայի կայսրը բարկանում է դրա համար և նրա գեազանը կատաղի մի բողոք է ներկայացնում Washington-ի կառավարութեան: Այդ առթիւ պետական

քարտուղարի տուած պատասխանը (1850) նշանաւոր document է: Այդ պիտլամատիկ գրուածքը վերջանում է հետեւալ բնորոշ եղանցութեամբ. «Եթե Միացեալ նահանգների ժողովուրդները տեսնում են իրանց աշքի տառջ որ օտար երկրներում ճշնշուած աղդերը գերմարդկային ճիշդեր են անում ձեռք բերելու, մեզ պէս, իրանց վիճակը բարուաքող միջացներ և օրէնսդրութիւն, բոլորովին անտեղի կը լինէր երեակայել և ազատի որ նրանք կը մնային անտառքեր հանդիսատեսներ հանդէպ ոյդ ահաւոր իրողութեանց: Danil Website մեծանուն պետական քարտուղարը Միացեալ Պետութեանց, յետոյ գնուական և բացարձակ կերպով յայտարարում է. «Վիճնայի քանի թուները թող վստահ լինի որ Մ. Նահանգների ժողովուրդն և պետութիւնը հաւատարօքը պահպանելով հանդերձ կատարեալ չեղոքութիւն, միենոյն ատեն ոչ մի բան ոչ մի ժամանակ նրանցից ոչ մէկին և ոչ միւսին պիտի չարգելէ ազատորէն արտայայտելու իրանց կարծիքը աշխարհի քաղաքակիրթ աղդերէ շրջանում կատարուած կամ կատարուելիք քաղաքական մեծ անցքերի մասին:

Սրանից չորս-հինգ տարի առաջ մոռմանիայում հրէայք հալածւում են և գրանցից 50,000 գաղթում են. Ամերիկա, այդ պատճառով 1902-ին John Hay պետական քարտուղարը իր վեց մեծ պետութեանց ուղղած շրջաբերականով խսիր բողոքում է Ռումանիոյ կատարած կամ կատարուելիք քաղաքական մեծ անցքերի մասին:

Այդ հօւսական պատճառութեանց մասին պատճառութեանը կամ կատարուել է 1850-ին Հունգարիայում և կամ 1900 ին Ռումանիայում, որպէս հազար մէկին, Ամերիկան ժողովուրդը և պետութիւնը պարտի մահի աալ: Ուրեմն ժամանակ է մեզ համար մտածել և որոշել թէ արգեօք աշխարհի տանջուող աղքերի խլացնող պաղակների հանդէպ մենք բարի Սամարացու գմբը պէտք է կատարենք, այդպէս մենք արել ենք անցելոյն մեծ ճգնաժամերի առթիւ, թէ մնալու ենք անհոգ անտարբեր նման կետացուն:

Ամերիկան հասարակաց կարծիքը անցեալ ժամանակներում ճշնշուած շատ աղքերին մեծ օգնութեալ է:

Էլ կարող են ստորագրել այլ նրանք լրջօրէն կոչ են անում աղդերին (այսէնքն 6 մեծ պետութեանց) ի գործ դնելու այն սկզբունքները ու ըստնք ընդունուած են այն դաշնագործեամբ, որովհետև դրանք միջազգային օրէնքի և յաւիտենական արդարութեան սկզբունքներ են:

Ակնարկելով այդ վառ ինդրոյն այն ատեն «New-York Tribune» լուսագրը ասում է. «Նկատելով որ այդ պետութիւնը պատասխանատու են Ռումանիոյ գոյութեան, որը այս պարագայում յայտնապէս յանցաւորն է», (մի բան որ հայկական հարցի մասին էլ պէտք է ասել ու կը կննել այսօր) Գետական Քարտուղարը ուղարկեց այդ գրութիւնը նրանց միայն այն դովելի և աղջիւնապատակով որ դաշնագիր պետութիւնները ճշնշուած գործ դնէին Ռումանիայի վըրայ որպէսզի խելքի գար և կատարելու ձեռնարկէր իր պարտականութիւնները, որ նա ստանձնել էր հանդիսաւորապէս քաղաքակըրթուած աղքերի աշքերի առաջ:

Այսօր Հայաստանի ամեն կողմերում կատարած խժդութիւնները, որոնց սոսկալի մանրամասնութիւնները օրը օրին և ամսէ ամիս մեզ հաղորդում են, գերազանցելով այն ամեն անարդարութիւնը և հալածանքը որոնք երբէք կատարուել են 1850-ին Հունգարիայում և կամ 1900 ին Ռումանիայում, որպէս հազար մէկին, Ամերիկան ժողովուրդը և պետութիւնը պարտի մահի աալ: Ուրեմն ժամանակ է մեզ համար մտածել և որոշել թէ արգեօք աշխարհի տանջուող աղքերի խլացնող պաղակների հանդէպ մենք բարի Սամարացու գմբը պէտք է կատարենք, այդպէս մենք արել ենք անցելոյն մեծ ճգնաժամերի առթիւ, թէ մնալու ենք անհոգ անտարբեր նման կետացուն:

Ամերիկան հասարակաց կարծիքը անցեալ ժամանակներում ճշնշուած շատ աղքերին մեծ օգնութեալ է:

թիւններ մատակարարելուն նպաստեց և յարգելի Մր. White, որ Itachea նահանգում փետ. 12-ին արտասահած բանախօսութեան մէջ իրաւամբ շեշտեց. «Ուժանասուն տարիներ առաջ ամերիկեան հասարակաց կարծիքը զօրեղ գրծոն մը հանդիսացաւ ազատելու յայներին օսմանցոց արիւնաբրու բռնապետութիւնից և նմանապէս ազատելու Բուլղարներին և Մակեդոնացիներին (?)! միւնոյն գաղանի ճիրաններից»: Հետեւարը, թող հայերը քաջալերուն և սիրտ առնեն—ասում է յարգելի Մր. Mead—ի նկատի ունենալով այն

իրողութիւնը որ Ամերիկեան դեռ այն երկիրն է ուշ հասարակաց կարծիքը ոյց մ'է:

— Իսկ թէ իրապէս ո՞րն է ամերիկեան քաղաքականութիւնը մենք տեսանք Ռուզվելտի խօսքերից. «մեր միջամտութիւնը աւելի կը վատթարացնի ձեր զրութիւնը» ասաց նա...:— Նոյն համարում հրատարակուած է պ. Ֆարհատի անցեալ տարուայ «Մուրճում» լոյս տեսած «Զպատմած իրողութիւններ» վերնազրով պատմուածքի թարգմանութիւնը Մ. Պաղպասարեանի աշխատութեամբ:

## ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Թիւրքահայերի վիճակը,— Նին նախապահարաւմներ եւ նար նահապարեն:

Թիւրքահայերի ծանր վիճակը դարձեալ ուշադրութիւն գրաւեց՝ Պօլսի հայոց պատրիարք Օրմանեանի և Կիլիկիայի կաթողիկոս Սահակի հրաժարականի պատճառով: Սուլթանը չյարգեց նոյնիսկ այդ երկու բարձր հոգևորականների զգոյշ, համակերպուող քաղաքականութիւնը և յարքունիս գրաւեց Կիլիկիայում գանուող Թլանի ազգային ընդարձակ ագարակը, որպէսզի այդ հողերի վրայ բնակեցնի մուսուլման գաղթականներ (մահաճիրներ): Այս հարուածը համեմատութեամբ այն խրժադժութիւնների հետ, որ կատարուել են և կատարուած են Բիթլիսի և Վասի վիլայէթներում, ի հարկէ, չնչին է, սակայն բնորոշ սուլթանական ոխերիմ հայատեցութիւնը ցոյց տալու համար:

Ի՞նչ անել—ահա մի հարց որ մօտ 30 տարի ցցուած է հայ ժողովրդի առջև, մի հարց, որի լուծման փորձը ոզինուած ապրուտամբութեան միջոցով՝ աւելի և անտանելի և վատթար դարձը թիւրքահայ ժողովուրդի կացութիւնը: